ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2024 թվականի № ----Ա

«ԱՍ-ՍԻՍՏԵՄՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №494-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգի 6-րդ կետի համաձայն՝ «ԱՍ-ՍԻՍՏԵՄՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) մինչև 2024 թվականի հուլիսի 30-ը պետք է Հանձնաժողով ներկայացներ Որոշման №2 և №6 հավելվածներով սահմանված ձևերին համապատասխան 2024 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունները (այսուհետ՝ Հաշվետվություններ), որոնք, սակայն, չի ներկայացրել,

բ) Որոշմամբ սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովն Ընկերության նկատմամբ 2024 թվականի սեպտեմբերի 17-ին հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 17-ի №ԳԲ/34.2-Մ2-7/4393-2024 գրությամբ,

գ) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել,

դ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջները,

ե) Ընկերությունը մինչև 2024 թվականի հունվարի 30-ը պետք է Հանձնաժողով ներկայացներ Որոշման №2 և №6 հավելվածներով սահմանված ձևերին համապա-

տասխան 2023 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետվությունները, որոնք, սակայն, չի ներկայացրել, որի արդյունքում Հանձնաժողովն իր 2024 թվականի հունիսի 12-ի №175-Ա որոշմամբ, որն օրինական ուժի մեջ է մտել 2024 թվականի հունիսի 16-ին և անբողոքարկելի է դարձել 2024 թվականի օգոստոսի 17-ին, Ընկերությանը պարտավորեցրել է որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել Ընկերության 2023 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետվությունները,

զ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կարգավորվող անձի կողմից կարգավորողի իրավական ակտով սահմանված պահանջը կատարելը կամ ոչ պատշաճ կատարելը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ դրա գործուղության դադարեցում, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ և 19-րդ հոդվածների 2-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված պահանջների խախտման համար Ընկերությանը տուգանել 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը պարտավորեցնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) տասնօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել Որոշման №2 և №6 հավելվածներով սահմանված ձևերին համապատասխան՝ Ընկերության 2024 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունները.
   2) մեկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետով սահմանված գումարը №900005242319 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում

որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:

4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2024թ.